

ՄՇԱԿ

Ցարական գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր թաւին 2 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՅՈՒՆՆԵՐ ԲԱՐԵՆՈՐԴԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խնդրում է ընկերու-
թեան անդամներին շնորհ ընել կիրակի, հոկտեմբերի 8-ին, ժամը 11-ին ս. Նշա-
նի եկեղեցի, ուր կատարվելու է ընկերութեան հիմնադիր և վարչութեան անդամ
ՏԻԿԻՆ ԿԱՏԱՐԻՆԵ ԵՒ ՆԱՆԳՈՒԹԵԱՆ
հոգեհասկումը: Հոգեհասկումը յետոյ կայանալու է ընդհանուր ժողով
հանգուցեալի յիշատակը պատուելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին հեռագիրը. Հեռագիրներ. Օրինակ ա-
ռէք. Յայտագիր. Կիսովատման և հայոց հար-
ցը. —ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիսովատման
կեանքը. Նամակ Օրէսայից. Ներքին լուրեր.
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. —
ՀԵՌԱՎԻԴԱՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԻՄԱՆԱ-
ՍԻՄԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱՎԻԴԱՆԵՐ

Ահա տպում ենք, Կ. Պօլիսի, Ռուսաց
գործակալութեան միջոցով ստացած հե-
ռագիրը, որ սուլված է ընդունեց
րէֆօրմները ծրագրելու:

Հաստ ուրախ ենք:
Բայց մի հարց միայն մնում է անորոշ
և մութ: Արդեօք դա ո՞ր ծրագիրն է. մա-
յի 11-ի ծրագիրը, թէ այն ծրագիրը,
որի մէջ մտնում է Անգլիայի առաջարկած
յաւելումը՝ եւրոպական կօնտրօլի մա-
սին, թէ մի նոր բան:

Եթէ այդ այն ծրագիրն է, որով եւրօ-
պայի, յատկապէս Ռուսաստանի, Անգլիա-
յի և Ֆրանսիայի ձեռքն է արվում բար-
ձրագոյն կօնտրօլի իրաւունքը Հայաս-
տանում, —այդ ժամանակ հաստատուեալ
կարելի է ասել, որ մի քանի ամսից
յետոյ կարգ և արդարութիւն կը հաս-
տատվի այդ թշուառ երկրում, որ աշխարհ
տարիներ տանջվեց, այնքան բազմաթիւ
զոհեր տուեց:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՍԻՐԱԿ ԹԻՐԻՐԻՍԻԱՅԻՅԻ

Կ. Պօլիս, սեպտեմբերի 26-ին

Ո՛րքէս սկսել, որ վերջացնել, որը պիտի յիշեմ,
որը մտնանք, այնքան աղաքան են դէպքերը,
այնքան առատ ու խառնակ, այնքան յուզիչ:

Սկիզբը նախաբանական փոփոխութիւններ: Սեպ-
տեմբեր 21 հինգշաբթի առտու ստորագրւում
փոփոխութեան լուրը լսուեցաւ, քիչ ետքը հաս-
տատուեցաւ Սաիդի անկումը բոլոր քրիստոնեա-
նեան ընդհանուր գործակալութիւն պատճառեց,
և մասնաւորապէս հայերուն համար գոհացում մը
նկատուեցաւ: Քեամիլ-փաշա ծերունի մըն է, որ
1885-էն 1891 ստորագրութիւն ըրաւ, իր օ-
րերն էին, որ պատանեցան Գուլ-Գարսի դէպ-
քերը: Կը փափագէր պարագանքն օգտուիլ և
Հայաստանի մէջ քիչ շատ բարեկարգութիւն մը-
ցնել, ան ատեն պատրիարքարանը, լաւ յարաբե-
րութիւններ ունենալով հանդերձ Նպարգասին
հետ, չի կրցաւ կացութիւնը հասկնալ և անոր
համարում գործել: 1890-ին դէպքերը մեծապէս
ձեռնառու էին Հայաստանի նպաստաւոր կացու-
թիւն մը պատրաստելու համար: Քեամիլ-փաշա
կը հասկնար վիճակը, բայց պատրիարքարանին
ամեն բարի դիտարկութիւն պարագը հանեց:
Նաղմը, որ նոր գործի գլուխը անցած էր, իր
շահերուն նպաստող քաղաքականութիւն մը ու-
նէր, որ մահաբեր պիտի ըլլար թիւրք իշխանու-
թեան համար. այդ քաղաքականութիւնը յաղթա-

ՀԵՌԱՎԻԴԱՆԵՐ

(Ռուսաց գործակալութեան)

Կ. Պօլիս, 5 հոկտեմբեր: Հրատարակ-
ված է սուլվածների իրադէն, որով հաստա-
տում է հայկական ընթերցանիքի ծրագիրը,
որ մշակել են Ռուսաստանի, Ֆրանսիայի և
Անգլիայի դեսպանները Բ. Կրան հետ միասին:
Դեսպանները վճռեցին խնդրել հայոց
պատրիարքին, որ նա անցապաղ աշակցի իր
հօտի մարքերը խաղաղացնելու գործին:

Լօնդօն 5 հոկտեմբեր: «Daily Chro-
nicle» լրագիրը ասում է, որ Ռուսաց,
Ֆրանսիական և անգլիական դեսպանները,
համբարաշխութեամբ գործելով, յանձնեցին
Սաիդ-փաշային գրաւոր առաջարկութիւն
ներ հայոց հարցի առիթով: «Իշխանի
գործակալութիւնը» կարծում է, որ սուլ-
վածը կընդունի հայկական ընթերցանիքի
նախագիծը:

Կ. Պօլիս, 4 հոկտեմբեր: Երէկ Ղա-
լութիւնում և Ստամբուլում, իսկ այսօր
Բէրլինում, հայոց կօմիտէներին զորմամբ,
հայերը կրկին փակեցին խանութները: Բե-
րլին եկեղեցում կրկին ապստամբեցին
150 մարդիկ և Ղալութիւնի եկեղեցում—
50 հոգի: Տեղի ունեցան մի քանի աննշան
ընդհարումներ Ստամբուլում և Ռսկեղծի-
լում: Նոր ձերբակալութիւններ են տեղի
ունենում: Ձերբակալում են նոյնպէս թիւր-
քերին:

Նակեց: Քեամիլ-փաշա 1891-ին ուղեց, որ Կո-
նստանդուպօլիսում ունենայ, և բոլորովին
պաշտօնի ստորագրեալը չլլայ. իր այս քաղա-
քականութիւնը երևան ելլելուն պէս պաշտօնակ
եղաւ: 1891 սեպտեմբերին: Անէի ի վեր կապ-
րէր քաջաւած, և ըստ սովորութեան, ոտակաւա-
կան հակողութեան ներքի: Պարագանքը շատ
ծանր ըլլաւ: Են, որ սուլվածը այդ իր չի սի-
րած մարդուն նորէն պաշտօնի կանչեց: Քեամիլ-
փաշա շատ հաճելի է անգլիացիներուն, ուստի
սուլվածը կը յուսայ, որ պիտի կրնայ գործը ա-
նուշ տեղը կապել:

Քեամիլ հինգշաբթի պաշտօնին գլուխը ան-
ցաւ, չարաքօր զորհարարութիւնները ընդու-
նեց, նոյն օրը պատրիարքը իր կողմէն զորհա-
ւորութեան զրկեց Հմայեալ եպիսկոպոսը, որ
կրօնական ժողովի դեր-տունապետն է, և պ-
Միհրան Գովալիմեան, ատենապետ Գաղաթական
ժողովին: Քեամիլ-փաշա շատ սիրալի ընդունե-
լութիւն ըրաւ. յայտարարեց թէ կը փափագի
պատրիարքին հետ տեսակցել, համբար լսած է:
Պատրիարքին կողմէն գացողները պատասխանե-
ցին թէ հիւանդ է և երբ առողջանայ՝ պիտի գայ:
—Նպարգասը խօսեցաւ օրուան խնդիրներու վրա:
Լսաւ թէ յորդորելու է ժողովուրդը ալ ցոյց
չընել, հանգիստ մնալ, ամեն բան պիտի կար-
գադրուի, անհոգ ըլլալու է. «Ինչ որ չանցեալ
մինչև հիմա վրա կուտար պարագ տեղը» ըսաւ:
—Այս տեսակցութիւնը լաւ տպաւորութիւն մը
առաջ բերաւ պատրիարքարանին շրջանակնե-
րուն վրա, բայց ժողովուրդը անտարբեր կը մը-
նայ, մինչև որ գործ չի տեսնէ:

Քեամիլ-փաշային առաջին գործը եղաւ պա-

ՕՐԻՆԱԿ ԱՌԷՐ

Ֆրանսիան ներկայումս պատերազմում է
Մարազասկարի հետ: Կուրի ժամանակ վի-
րաւորվել, սպանվել են բազմաթիւ Ֆրան-
սիացիներ: Հէնց որ այդ լուրը հասաւ Ֆր-
անսիա, բոլոր Ֆրանսիացիները զգացին,
առանց որ և է յորդորել, զրգված միայն
մարազասկարի և հայրենասիրական ձգ-
տումներէն, թէ պէտք է օգնել վիրաւոր-
վածներին և սպանվածների ընտանիքնե-
րին:

Եւ օգնութեան գործի գլուխ կանգնեցին
հարուստները և փաճառականները: Ամեն
ուրեք հանգանակութիւններ բացվեցին, ներ-
կայացուցին, օգնեցին, երեկոյթներ սարք-
վեցին և փողն սկսեց գետի պէս հոսել:
Մի ներկայացման տոմսակի համար Բօտ-
չիլին ուղարկեց 100,000 Ֆրանկ, Մարս
Լէբօքին՝ 25,000 Ֆրանկ:

Ի հարկէ, հայ փաճառականները և հա-
րուստները չեն կարող եւրօպացի փաճառա-
կանների և հարուստների հետ համեմատ-
վել:—հայ փաճառականը, հայ հարուստը
զեռ մնացել է կատարեալ ասիացի. լայն
մարազասկարութեան, առատաձեռն կարեկցու-
թեան զգացումները այնքան հեռու է նրա
սրտից, որքան քաղաքակրթութիւնը՝ թիւր-
քից: Հայ փաճառականը, հայ հարուստը փող
տալիս է միայն այն ժամանակ, երբ մի
բան է սպասում և իր նուէրից մի փառք
ու օգուտ է ակնկալում: Վիրաւորվածների
սպանվածների օգնին փող տալը նա հա-
մարում է շուտով թիւն:

Եւ ճշմարիտ, վեր առնենք վերջին տասն
տարվայ դէպքերը. սով, երաշտութիւն, խօ-
ւրէր մեր երկրում: Կոտորած, սպանու-
թիւն, սով, երաշտութիւն մեր երկրաբա-
կից—թիւրքաց հայերի մօտ: Արդեօք դուրս
եկաւ մի հարուստ հայ, մի հայ կապիտա-
լիստ, որ մի անգամ մի նշանաւոր գումար
նուէրէր, շատ չէնք ասում, գոնէ 10,000
կամ նոյն իսկ 5,000 ռուբլի:

Հանջել, որ արտաքին գործերու նախարար թուր-
կան-փաշա պաշտօնակն ըլլայ: Սաիդ-փաշա, որ
թուրկական առաջ արտաքին գործերու նախա-
րար էր, կրկին կոչուեցաւ այդ պաշտօնին: Թէ
Քեամիլ և թէ Սաիդ համակարծիք են, որ ըն-
դունելու է սպրիլ 29 (մայիս 11-ի) ծրագիրը,
բայց սուլվածը անգամ մը եւս դիմադրեց, սա-
կայն քանի մը զիջողութիւններ ալ ըրաւ, ու այդ
սորագրութիւններով ծրագիրը ստորագրուեցաւ:
Քեամիլ-փաշայէն: Եւ Սաիդ-փաշա կէս գիշերին,
մէյմէլ օրինակ առնելով տարաւ վեց դեսպա-
նատունները, վերին Վոսֆօր:

Սաիդ առաջարկելու պատճառ ունէր. միւս օ-
րը, կիրակի, վեց դեսպանները պիտի գային
Սթամպուլ, իրենց պահակ չողենաւներով, ու ծա-
նուցաբեր պիտի տային Կրան. սուլվածը կու-
ղէր այս ցոյցին առաջը առնել. աս պատճա-
ռաւ փութեց գիշերանց երթալ: Սակայն մա-
սամը միայն կրցաւ յաջողիլ իր դիմումին մէջ:
Աղաչեց, պաղատեց, շատ մը բարի տրամադրու-
թիւններ ցոյց տուաւ, որպէս զի ոչ դեսպաննե-
րը Կոնստանդուպօլիսում, և ոչ ալ պահակ չողենաւները
զրկեն: Դեսպանները գիշան, որ միայն իրենց
թարգմանները զրկեն, բայց չողենաւներուն հա-
մար անդրադուրեցին մնացին:

Եւ անա կիրակի, անձրևոտ օրով մը, վեց մեծ
պետութեանց դեսպանատուններու պահակ չողե-
նաւները հետգնեցին վերին Վոսֆօրէն իջան նա-
ւանագիտ, մօտեցան Սիբէթիի նաւամատոյցը
և առաջին թարգմանները կառքով ուղղակի
Կոնստանդուպօլիսում միօրինակ ծանուցաբեր տուին
արտաքին գործերու նախարարին: Թարգմանները
յետոյ ուրիշ չողենաւներով վերադարձան Վոս-
ֆօր, իսկ պահակ չողենաւները գնացին Սալ-

Ամենամեծ նուէրը, որ արաւ մի հայ
կապիտալիստ—100 Ֆրանկ ստերլինգ էր,
յօգուտ Ստանլի սովետների, այն էլ, ինչ-
պէս երևում է անգլիական լրագիրների
խօսքերից, նուիրատու կապիտալիստը ինչ
որ նախապէս ձեռնարկութիւնների դի-
տումներով է արել այդ նուէրը:

Մեզ կասեն, որ հայ կապիտալիստները
Բօտչիլիներ չեն: Մենք էլ զիտենք այդ
բայց եթէ Բօտչիլի մի հատ թատրոնա-
կան տոմսակի համար կարող է տալ
100,000 Ֆրանկ, հայ կապիտալիստը թող
իր կեանքում մի անգամ 1,000 ռուբլի ապ
սպանվածների, վիրաւորվածների և սո-
վեալների օգտին:

Եւ դեռ զանգատվում են, թէ ինչու ենք ա-
սում, որ հայ հարուստը սիրտ չունի, ան-
կարեկից է, շատ շատ՝ միայն խօսել զիտէ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Որ Կ. Պօլիսի հայերը ներկայացրին Բ. Կրան և
վեց պետութիւններին:

Սեպտեմբերի 18-ի ցոյցի ժամանակ, հայերի
կողմից ներկայացրած յայտագիրը սկսվում է այս-
պէս.

«Կ. Պօլսոյ տեղացի և ամեն նահանգէ պան-
դուխտ հայերս միահամուռ կուգանք այսօր մեր
բողոքները և մեր ժողովրդին ու երկրին պէտ-
քերն ու պահանջները ներկայել Բ. Կրան և մեր
կացութիւնը անգամ մը եւս յանձնարարել մար-
դասեր աշխարհին ուղարկութեանը, և միանգա-
մայն յայտարարել թէ մեր արդի վիճակն այն
աստիճան դառնացած է, որ այլ եւս համակեր-
պութեամբ տանելու անկարողութեան մէջ կը
գտնուինք:»

Կրանից յետոյ հինգ կէտերով ամփոփված են
այն բոլոր ճշուհները, բռնութիւնները և հալա-
ծանքները, որոնց ենթարկված են հայերը թիւր-
քիայում, և որոնց դէմ բողոքում է յայտագիրը:
Բողոքի կէտերը թեւեղց յետոյ, յայտագիրը
ասում է.

բաղար, որ նաւահանգիստէն քիչ մը անդին է,
ու հոն շարունակ խարխաւ կեցան, իբր նա-
ւային ցոյց մը վեց պետութեանց կողմէն: Եթէ
անաբեկութիւնը շարունակէ ու վտանգի են-
թարկուի Բերա, ուր կը բնակին եւրօպացի-
ները մեծ մասամբ, ան ատեն պահակաւաւե-
րուն ծովային զօրքերը ցամաք պիտի ելլեն
պաշտպանելու համար իրենց հայրենակիցները:
Երեք օր է որ չողենաւները կեցած են այնպէս:

Ծանուցաբեր, զոր վեց պետութիւնները
տուին, կը բաղկանայ վեց մեծ երեսէ: Դեսպա-
նները կը պահանջեն, որ կատարութիւնը հարկ
եղած միջոցները անօրինէ չուտով խաղաղու-
թիւնը վերահաստատելու ապահովութիւններ
տալու համար: Երկրորդ՝ եկեղեցիները ապաստա-
նեալները երբ դուրս ելլեն, ոչ բանտարկուին,
ոչ ալ վտանգի ենթարկուին: Երրորդ՝ բանտար-
կեալներուն վիճակը զննելու, զանոնք հարցա-
քննելու համար միջադատչային յանձնաժողովի մը
անուանումը: Իսկ ասոնցմէ դուրս ծանուցաբերը
կը պարունակէ մանրամասն տեղեկութիւններ
ոստիկանութեան ու խուժանին միջոցաւ կատա-
րուած կոտորածներու մասին:

Այս ծանուցաբեր թէն անագին տպաւորու-
թիւն առաջ բերաւ Պօլիս ու մասնաւորապէս
հայոց համար քաջալեր մը եղաւ, սակայն դեռ
պատասխան չի կայ. կը սպասուի վարդապետ:
Թիւրքերը ժամանակ վատակելու համար վարպե-
տութիւն կընեն. փաշաները, պէշերը, էֆէնդի-
ները Կոնստանդուպօլիսում, անով դեսպանատուն-
ներէն դացողները մարդ չեն գտնել հետերին
խօսելու համար: Ռուսիոյ դեսպան պ. Նէլիտօֆ
թէ երէկ, թէ այսօր Կոնստանդուպօլիսում
պաշտօնատունը գնաց, բայց մէկը չի գտաւ.

